ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում Հայաստանի Հանրապետության պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի մասին

ՀՀ քննչական կոմիտեն (հասցե՝ ք.Երևան, Մամիկոնյանց 46/5) Հայաստանի Հանրապետության պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարում է մրցույթ, որն իրականացվում է մեկ փուլով:

Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել նախաքննական մարմնի պահանջով բանավոր և գրավոր (նյութերի գրավոր հաստատված) թարգմանություններ, այդ թվում քրեական վարույթի նյութերի գրավոր հաստատված թարգմանություններ և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձ ապահովելու ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Հայտի լեզուն հայերենն է:

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել փաստաթղթային ձևով՝ ք.Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեով:

Սույն հայտարարությունը կազմվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 20-ի N 1509-Ն և 2018թ. նոյեմբերի 22-ի N 1334-Ն որոշումների (**25.12.2025թ. խմբագրությամբ**) պահանջները:

Հայտերի բացումը տեղի կունենա 2026 թվականի փետրվարի 20-ին՝ ժամը 12:00-ին, ք.Երևան Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել մրցույթային հանձնաժողովի քարտուղար **Արաքսյա Պողոսյանին**:

Հեռախոս՝ 093 51 81 49
Էլ փոստ՝ external@investigative.am
Պատվիրատու՝ ՀՀ քննչական կոմիտե:

*Հարգելի՛ մասնակից, մինչ հայտ կազմելը և ներկայացնելը, խնդրում ենք **մանրամասն** ուսումնասիրել սույն հայտարարությունը, քանի որ հայտարարությանը չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:*

1.ՊԱՀԱՆՋՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1.1 Գնման առարկա է հանդիսանում **Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում Հայաստանի Հանրապետության պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձի ծառայությունների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև Ծառայություն), որոնք խմբավորված են 5 չափաբաժիններում՝**

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Առավելագույն գին, ՀՀ դրամ*	
		Գրավոր (1 էջ՝ 1800 նիշ)	*Բանավոր (1 ժամ)*
23	Թարգմանություն՝ *սլովեներենից հայերեն, հայերենից սլովեներեն (բանավոր և գրավոր)*	18000	20000
27	Թարգմանություն՝ *հայերենից սլովակերեն, սլովակերենից հայերեն (բանավոր և գրավոր)*	11500	14000
29	Թարգմանություն՝ *հայերենից ուրդու, ուրդուից հայերեն (բանավոր և գրավոր)*	15000	15000
30	Թարգմանություն՝ *հայերենից ուզբեկերեն, ուզբեկերենից հայերեն (բանավոր և գրավոր)*	14500	17500
31	Թարգմանություն՝ *հայերենից եբրայերեն, եբրայերենից հայերեն (բանավոր և գրավոր)*	15000	18000
33	Թարգմանություն Կառ. 22.11.2018թ. 1334-Ն որոշման հավ. 1 կարգով չսահմանված լեզուներ (բացառությամբ եզդիերենի և պորտուգալերենի)	19000	22000

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2.1 Մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվելու ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 20-ի N 1509-Ն և 2018թ. նոյեմբերի 22-ի N 1334-Ն որոշումների պահանջները բավարարող անձինք:

3. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը հանձնաժողովին ներկայացնում է հայտ: Հայտը սույն հայտարարության հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հայտարարությամբ սահմանված ժամկետի ավարտը:

3.2 Մրցույթին հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հանձնաժողովին թղթային եղանակով՝ սույն մրցույթի հայտարարությունը ՀՀ քննչական կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում **և հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝** http://www.azdarar.am հրապարակվելու օրվանից հաշված **10 աշխատանքային** օրվա ընթացքում ժամը **«12:00»**-ն, ք.Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեով:

Ընթացակարգի հայտերը ընդունում և գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղարը*:* Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանց ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

3.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա) մրցույթին մասնակցելու մասին դիմում (Ձև 1),

բ) գնային առաջարկ՝ կից լեզուների գնացուցակով (Ձև 2),

գ) հայտարարություն՝ ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1334-Ն և 2018թ. դեկտեմբերի 20-ի N 1509-Ն որոշումների պահանջների համապատասխանության մասին (Ձև 3 և 3.1),

դ) հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանք,

ե) դատվածության և հետախուզման առկայության մասին տեղեկանք, (իսկ իրավաբանական անձի դեպքում՝ գործադիր մարմնի ներկայացուցչի և նրա անունից ծառայություն մատուցող անձի դատվածության և հետախուզման առկայության մասին տեղեկանք)

զ) թարգմանիչների անձնագրային տվյալներ,

է) հայտարարություն առ այն, որ անձը սնանկ չի ճանաչվել (Ձև 4 և 4.1),

ը) թարգմանիչների՝ ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 1509-Ն որոշման պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր:

3.4 Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը (Կոմիտեն) կարող է դիմել նմանատիպ գործունեություն իրականացնող մարմիններին՝ մասնակիցների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

3.5 Հանձնաժողովը կարող է մասնակիցներից լրացուցիչ պահանջել իր ծավալած գործունեության մասին վերաբերելի ցանկացած փաստաթուղթ և տեղեկատվություն:

4. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

4.1 Առաջարկվող գինը ծառայության ինքնարժեքից բացի, ներառում է շահույթի, հարկերի և այլ վճարների գծով ծախսերը *(ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի N 1334-Ն որոշում Հավելված N 1, 6.4 կետ)*: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

4.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

5. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

5.1 Հայտերի բացումը կկատարվի հանձնաժողովի հայտերի բացման նիստում՝ սույն թվականի **փետրվարի 20-ին՝ ժամը 12:00-ին:**

Հայտերի բացման և գնահատման նիստում՝

1) հանձնաժողովի նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները:

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին (նիստը նախագահողին) փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հայտարարությամբ սահմանված վավերապայմաններին.

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված:

5.2 Մրցույթի հայտարարությամբ հայտարարված մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում է հետևյալ կերպ.

Մրցույթում հաղթող է ճանաչվում սույն հայտարարությանը համապատասխան թարգմանչական աշխատանքի համար նախատեսված գումարի սահմաններում նվազագույն գնային առաջարկ (մեկ չափաբաժնի համար՝ գրավոր և բանավոր գումարային) ներկայացրած մասնակիցը: Հավասար գնային առաջարկ ներկայացնելու դեպքում հաղթող է ճանաչվում առավել երկար մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող թարգմանիչը, իսկ կազմակերպության դեպքում՝ առավել երկար աշխատանքային գործունեություն իրականացրած և իր կազմում առավել երկար մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող թարգմանիչներ ընդգրկող, իսկ այս պայմանների հավասար լինելու դեպքում՝ առնվազն միևնույն լեզվով 2 կամ ավելի թարգմանիչներ ընդգրկող կազմակերպությունը:

5.3 Մրցութային հանձնաժողովը հայտեր ներկայացնելու վերջնաժամկետի ավարտման օրվանից հետո **7 աշխատանքային օրվա** ընթացքում գնահատում է ներկայացված հայտերը:

5.4 Հաղթող ճանաչված անձի հետ **3 աշխատանքային օրվա** ընթացքում կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր:

5.5 Մրցույթի հետ կապված բողոքները քննում է մրցույթային հանձնաժողովը:

6. ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հայտարարությամբ սահմանված կարգով:

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, սոսնձվում են և վավերացվում կնիքով ու ստորագրվում:

Ծրարը և սույն հայտարարությամբ նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում և կնիքում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

6.2 Սույն հրահանգի 6.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) «**Չբացել մինչև հայտերի բացման նիստը**» բառերը.

3) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

6.3 Սույն **հայտարարության** 6.1 և 6.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Ձև 1

ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
մրցույթին մասնակցելու

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի Ա.Ա.Հ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կողմից « »_____ 2026թ. հայտարարված մրցույթի_____ չափաբաժնին (չափաբաժիններին) և հայտարարության պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____-ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____(չի լրացվում ֆիզիկական անձի դեպքում)
  հարկի վճարողի հաշվառման համարը
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____
  էլեկտրոնային փոստի հասցեն
- գործունեության հասցեն է՝ _____
  գործունեության հասցեն
- հեռախոսահամարն է՝ _____
  հեռախոսի համարը
- անձնագրային տվյալներ _____
  սերիա- համար, երբ և ում կողմից է տրված

_____ _____
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ.Տ.

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում Հայաստանի Հանրապետության պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի հայտարարությունը _____

մասնակցի անվանումը

առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	**Ծառայության անվանումը**	**Միավորի գինը**		**Ընդամենը**
		Բանավոր (1 ժամ)	**Գրավոր** (1 էջ)	

- ***Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է միայն այն չափաբաժինների մասով, որին պետք է մասնակցի***

_____ _____

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

Կ.Տ.

Հայտարարություն

Սույնով հավաստում եմ, որ _____ ը, (ինչպես նաև ծառայության մատուցման
կազմակերպության անվանումը

շրջանակներում ներգրավված բոլոր թարգմանիչները) համապատասխանում են ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1334-Ն և 2018թ. դեկտեմբերի 20-ի N 1509-Ն որոշումների պահանջներին:

_____ _____

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ.Տ.

Ձև 3.1

Հայտարարություն

Սույնով հավաստում եմ, որ _____ ս, համապատասխանում եմ ՀՀ կառավարության
ֆիզիկական անձի Ա.Ա.Հ

2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1334-Ն և 2018թ. դեկտեմբերի 20-ի N 1509-Ն որոշումների պահանջներին:

_____ _____
(անուն ազգանունը) ստորագրությունը

Կ.Տ.

Հայտարարություն

Սույնով հավաստում եմ, որ _____ ը սնանկ չի
կազմակերպության անվանումը
ճանաչվել:

_____ _____
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ.Տ.

Ձև 4.1

Հայտարարություն

Սույնով հավաստում եմ, որ _____ սնանկ ճանաչված չեմ :
ֆիզիկական անձի Ա.Ա.Հ

_____ _____
(անուն ազգանունը) ստորագրությունը

Կ.Տ.